ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 6 արտահերթ նիստի օրակարգի 27, 28, 29, 30 հարցերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնքի ավագանու 2020 թվականի
սեպտեմբերի 11-ի N 6 նիստի N 27-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1.Երվանդաշատ համայնքի ավագանու N 6 նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-Ի N29-Ն որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

3.Համայնքապատկան հողի աճուրդ վաճառքի և վարձակալությամբ տրման մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

4. Համայնքի սեփականություն հանդիսացող տարածքից ավազակոպիճի օգտագործման թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<11>> <<սեպտեմբերի>> 2020թ. *N 28-Ն*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության 2020 թվականի օգոստոսի 18-ի N 01/17836-20 պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի <<2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N29-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Կողմ -5	Դեմ -0	Ձեռնպահ -0
ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ			
ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ			
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 28-Ն որոշման

1.Հողի (գույքի) օտարումից նախատեսել 2600,0 հազ. դրամ և այն ուղղել բաժին 8, խումբ 2, դաս 3 հատվածի 5113 հոդվածին(Կուլտուրայի շենքի երկրորդ հարկի մի մասի վերակառուցում մանկապարտեզի):
1.1.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից բաժին 11, խումբ 1, դաս 2 հատվածի 4891 հոդվածը նվազեցնել 1650,0 հազ. դրամով(ՀՏՀՀ Ջրային տնտեսության համաֆինանսավորում):
1.2.Երվանդաշատ համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի բաժին 1, խումբ 1, դաս 1 հատվածի 4111 հոդվածը նվազեցնել 250,0 հազ. դրամով(ՀՏՀՀ Ջրային տնտեսության համաֆինանսավորում):
1.3.Երվանդաշատ համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի բաժին 04, խումբ 2, դաս 4 հատվածի 4657 հոդվածն լրացնել 1900,0 հազ. դրամով(ՀՏՀՀ Ջրային տնտեսության համաֆինանսավորում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է՝

1.Աճուրդ վաճառքով վաճառել՝
1.1.Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, արոտավայր, կադաստրային ծածկագիր՝ 04-041-0106-0044, 4,0 հա, մեկնարկային գինը՝ 300000 դրամ, նախավճարի չափը՝ 15000 դրամ, քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով: Աճուրդի մասնակցության վճարը 5000 դրամ:

2.Տրամադրել վարձակալության՝
2.1.Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, արոտավայր, կադաստրային ծածկագիր՝ 04-041-0106-0044, 4,0 հա, մեկնարկային գինը՝ 40000 դրամ, նախավճարի չափը՝ 2000 դրամ, մրցույթի քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով: Մրցույթի մասնակցության վճարը 5000 դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎԱԶԱԿՈՊԻՃԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է

1. ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի վարչական տարածքում գտնվող <<Ավազանոցի ձոր>> կոչվող տարածքից մինչև 2 մետր խորությամբ որպես օգնություն <<Էն Շին>> ՍՊԸ-ին թույլատրել իրականացնելու պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոյի՝ ավազակոպիճի օգտագործում՝ 1580 մ^3: Տվյալ տարածքը ներառված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, բուսահողի խախտում չի լինում, ռեկուլտիվացիայի անհրաժեշտություն չկա, պատմական հուշարձանների տարածք չէ, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն չունի, տարածքը զուրկ է բուսական ծածկույթից:

2.<<Էն Շին>> ՍՊԸ-ն որպես նվիրատվություն համայնքին է տրամադրում 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հ. Ավետիսյանին իրականացնելու սույն որոշումից բխող իրավական գործառույթներ՝ կնքելով համապատասխան պայմանագիր:

4.Պայմանագրի ժամկետ սահմանել 2020 թվականի սեպտեմբերի 11-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 15-ը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**